






ՆԱԽԻՉԵՎԱՆ



ՔԱՐՏ ԵՉԱԳԻՐՔ



A landscape photograph showing a mountain valley. In the foreground, there is a stone wall and a wooden structure, possibly a gate or a fence. The middle ground is filled with dense green and yellow vegetation. In the background, there are large, rugged mountains under a clear sky.

ISBN 978-9939-843-02-5

Քարտեզագիրքը հրատարակության է
պատրաստվել ՀՀ մշակույթի
նախարարության աջակցությամբ

Տպագրությունը իրականացվել է
լուսանջելեսաբնակ
տեր և տիկին
Արթուր և Լիլի Սերեդյանների
հովանավորությամբ

© Հայկական ճարտարապետություն
ուսումնասիրող հիմնադրամ, 2012

Տեղադրություն. Նախիջևանը տարածվում է Արաքսի միջին հոսանքում՝ գետի և Ջանգեզուրի լեռնաշղթայի միջև: Ներկայումս սահմանակից է Հայաստանի Հանրապետությանը, Իրանի Իսլամական Հանրապետությանը, իսկ 1931 թ.-ից Թուրքիայի և Իրանի միջև փոխանակված տարածքի արդյունքում՝ նաև Թուրքիային¹:

Պատմություն. հայտնաբերված հնագիտական հուշարձանները (Մոխրաբլուր [Զյուլթափա], Շորբլուր [Շորթափա]) վկայում են, որ մարդը երկրամասի տարածքում բնակվել է առնվազն նոր քարե դարի (նեոլիթ, մ. թ. ա. է-Ե հազ.) ժամանակաշրջանից:

Նախիջևանը եղել է Ուրարտական (Այրարատյան) Հայաստանի (մ.թ.ա. 10-է դդ.), ապա Երվանդունիների (Ք. ծ. ա. 2-Բ դդ.), Արտաշեսյանների (մ. թ. ա. 189 - մ. թ. Ա դարակիզը), Արշակունիների (66-428 թթ.) հայկական թագավորական հարստությունների կազմի մեջ և դարեր շարունակ վարչականորեն պատկանել է հայ նախարարական երկու՝ արևմտյան մասում՝ Արծրունյաց, արևելքում՝ Մյունյաց տներին: Հին և միջին դարերում ընդգրկել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Շարուր, Մյունիքի՝ Երնջակ, Ճահուկ, Վասպուրականի՝ Նախճավան և Գողթն գավառները: Հայ գրերի ստեղծող և հայ ինքնուրույն թարգմանական գրականության հիմնադիր Մեսրոպ Մաշտոցը (405-406 թթ.) Գողթն գավառում է բացել առաջին դպրոցները, տարածել հայ գիրն ու դպրությունը:

Է-Թ-րդ դարերում ողջ Հայաստանի հետ արաբները նվաճում են նաև Նախիջևանը: Արաբներից ազատագրվելուց հետո այն մտնում է հայ Բագրատունիների թագավորության կազմի մեջ (885-1045):

ԺԱ դարից մինչև ԺԳ դարի սկիզբը երկրամասին տիրում են սելջուկ-թուրքերը, ԺԳ-ԺԸ դարերում՝ թաթար-մոնղոլները, ԺԵ-ԺԶ դդ.՝ սև-ոչխարավորները (կարա-կոյունլուներ) և սպիտակ-ոչխարավորները (ակ-կոյունլուներ), իսկ ԺԶ-ԺԸ դդ.՝ պարսից Մեֆյանները:

Հակառակ իրարահաջորդ նվաճողների առաջ բերած ծանր պայմանների՝ երկրամասի բնիկ հայ ազգաբնակչությունը, այնուամենայնիվ, կարողանում է զարգացնել տնտեսությունը. կառուցվում են ջրանցքներ, ջրանցույցներ, քարաշեն բազմաթիվ կամուրջներ: Բարեկարգվում են ճանապարհները: Արդեն ԺԵ դարի երկրորդ կեսին այն աստիճան են բարգավաճում արհեստներն ու առևտուրը, որ այդ միջավայրում ծնունդ են առնում նոր և աճում են քաղաքային հին բնակավայրերը՝ Նախիջևան, Որդվատ, Ջուղա և այլն: Սրանցից, օրինակ, գուտ

հայաբնակ Ջուղայի բնակչությունը հասնում է մինչև 50.000-ի²:

Նախիջևանի բնիկ ազգաբնակչության համար աննախադեպ կորստաբեր է լինում 1605 թ. օսմանյան զորքերի հարվածների ներքո նահանջող Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթը: Արհավիրքից հետո հայաթափ բնակավայրերի մի մասը բնակեցվում է Օսմանյան կայսրության և Իրանի այլևայլ վայրերից փոխադրված քյուրքական ծագմամբ մահմեդական զանազան ցեղերով:

Գերմանացի արևելագետ Ադամ Օլեարիուսի վկայության համաձայն՝ 1636 թ. պարսից Շահ Մեֆիի հրամանով Շահ Աբասի բռնագաղթեցրած բնակչության մի մասին թույլ է տրվում վերադառնալ իրենց հայրենի բնակավայրերը, որի շնորհիվ արագորեն վերականգնվում է Նախիջևանի տնտեսությունը, վերստին զարթոնք է ապրում մշակույթը:

1639 թ. մայիսի 17-ին Ղաարե Շիրինում Իրանի և Թուրքիայի միջև կնքվում է հաշտության պայմանագիր, որով Հայաստանը բաժանվում է այդ երկու պետությունների միջև: Պարսկաստանին է անցնում Արևելյան Հայաստանը, որի տարածքում էլ ստեղծվում են Երևանի և Նախիջևանի խանությունները:

Նադիր շահի մահից (1747) հետո Նախիջևանի խանությունը ձեռք է բերում կիսանկախ վիճակ: Իրարահաջորդ խաներն ավար ձեռք բերելու նպատակով ոչ միայն պարբերաբար արշավում էին հարևան խանությունների և փաշայությունների վրա, այլև ծանրագույն հարկերով կեղեքում իրենց իսկ հպատակության ներքո գտնվող և մասնավորապես քրիստոնյա, այսինքն՝ հայ բնակչությանը: Նախիջևանի հայաբնակ գյուղերը հաճախակի թալանում և ավերում էին նաև խանության սահմաններ թափանցող հարևան թուրք, քուրդ և պարսիկ տիրակալներն ու ցեղապետները:

Ռուս-պարսկական պատերազմի ավարտից հետո՝ 1828 թ. փետրվարի 10-ին կնքված Թուրքմենչայի դաշնագրով Նախիջևանի կիսանկախ խանության տարածքը Երևանի խանության հետ մեկտեղ անցնում է Ռուսաստանին: Ուշագրավ է ռուս կայսր Նիկոլայ Ա-ի՝ նույն թվականի մարտի 21-ի հայտարարագիրը, որտեղ մասնավորապես նշվել է. «Մեր քաջամարտիկ զորքերը ...գրավեցին Երևանի խանությունը՝ Արաքսի երկու կողմերում, և Նախիջևանի խանությունը՝ հին Հայաստանի մի մասը, ընկավ հաղթողի իշխանության տակ»³:

1849 թվականից մինչև 1918 թ. մայիս ամիսը Նախիջևանը մտնում է Երևանի նահանգի մեջ:

ՄԵԾ ՀԱՅՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 298-387 ԹԹ.



ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՉ ԲԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՐՏԵԶ



1905 թ.՝ հայ-թաթարական⁴ ընդհարումների օրերին, ավերվում և թալանվում են Նախիջևանի գրեթե բոլոր հայաբնակ գյուղերը։

Առաջին աշխարհամարտից հետո՝ 1918 թ., թուրքական բանակը ներխուժում է նաև Նախիջևան և տեղացի մահմեդական տարրերի հետ համատեղ շարունակում 1915 թ.-ից ի վեր գործադրած հայերի ցեղասպանությունը։

1918 թ. դեկտեմբերի 14-ին Երևանի փոխթեմակալ Խորեն եպիսկոպոսը Գևորգ Ե կաթողիկոսին գեկուցում է, որ Նախիջևանի շրջանի գյուղերում ավերվել են 62 եկեղեցի և 18 դպրոց⁵։

1919 թ. սկզբներից Նախիջևանը նահանգի կարգավիճակով մտնում է Հայաստանի Հանրապետության կազմի մեջ, սակայն այդ իրողությունից դժգոհ՝ նույն թվականի ամռանը մուսավաթականներն ապստամբություն են բարձրացնում, որի հետևանքով էլ սեպտեմբերին ծագում է հայ-թուրքական պատերազմը։

1920 թ. նոյեմբերի 30-ին Ադրբեջանի հեղկոմը Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու առթիվ գրված հայտարարության մեջ Նախիջևանը համարում է Հայաստանի անբաժանելի մաս. «...այսուհետև ոչ մի տերիտորիալ հարց չի կարող երկու դարավոր հարևան ժողովուրդների՝ հայերի և մուսուլմանների փոխադարձ արյունահեղության պատճառ դառնալ. Չանգեզուրի և Նախիջևանի գավառների տերիտորիաները Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասն են...»⁶։

1921 թ. մարտի 16-ին, սակայն, Թուրքիան և Ռուսաստանն առանց Հայաստանի մասնակցության Մոսկվայում կնքում են ապօրինի մի պայմանագիր, որով Նախիջևանը դրվում է Ադրբեջանի խնամատարության ներքո⁷։

1923 թ. արդեն Ադրբեջանի կազմում ստեղծվում է Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը, որի տարածքում էլ 1924 թ. փետրվարի 9-ին 5,5 հազ. կմ² մակերեսով կազմավորվում է վարչական 5 շրջան (Բաբեկ, Իլլիչևսկ, Շահբուզ, Ջուլֆա և Օրդուբադ)։

Բնակչությունը. համաձայն 1829 թ. կազմված տեղեկագրի՝ երկրամասն ունեցել է 5510 տուն բնակիչ, որից բնիկ և եկվոր հայերը միասին՝ 2719 տուն, իսկ նստակյաց և քոչվոր մահմեդական զանազան ցեղերը միասին՝ 2791 ընտանիք⁸։ Չնայած Նախիջևանի ԻՀ տարածքում բնակչության արձանագրված անընդհատ աճին՝ երկրամասի բնիկների՝ հայերի թվաքանակը 1918-1920 թթ. տեղի ունեցած կոտորածների, իսկ խորհրդային տարիներին էլ գործադրված

խտրական քաղաքականության արդյունքում անընդմեջ նվազել է։ Վերոնշյալն ակնառու է ներկայացվող աղյուսակում.

տարեթիվ	բնակիչ	հայեր	հայեր %	աղք.	աղք. %
1897 ⁹	87370	34672	34,4		
1913 ¹⁰	135000				
1924 ¹¹	90000				
1926 ¹²	104900	11276	14,9		81,4
1931 ¹³	111600		10,8		84,5
1939 ¹⁴	126700				
1959 ¹⁵	141400				
1970 ¹⁶	202200	6000	2,9	190000	93,9
1979 ¹⁷	230000	3406	1,4		
1991 ¹⁸	306000				

1918 թ. նշվել է, որ «Հին Նախիջևանի գավառը իր մեծ տարածության մեջ ունի մոտ 35 հազար հայություն, 48 հազար թրքություն։ Հին Նախիջևան քաղաքի ազգաբնակության մեկ երրորդ մասն է հայություն կազմում, մնացածը թուրքեր են»¹⁹։

Ազգային, քաղաքական և տնտեսական ճնշումներն արդեն խորհրդային առաջին իսկ տարիներին այն աստիճան էին սրվել, որ, օրինակ, 1923 թ. օգոստոսի 3-ին Նախիջևանի շրջանի հայաբնակ 15 վայրերի (Նախիջևան, Շխմահմուդ, Խալիլու, Քյուլթափա, Ուզուն-օբա, Նազարաբադ, Ղուլիբեկ-դիգա, Քյարիմբեկ-դիգա, Նազարի, Խալխալի, Յարմջա, Այլապատ, Ջահրի, Հաջիվար և Ղարախանբեկլու) հասարակությունն իր կազմած համախոսականում նշել է. «...ընտրում ենք Շխմահմուդ գիւղի բնակիչներ ընկ.ընկ. Գրիքոր Կյուրեղյանին և Գեղամ Ավետիսյանին իբրև ներկայացուցիչներ և լիազորում նրանց ուղարկելով Երեվան և Տփլիս, որպեսզի յիշեալ ընկերները համապատասխան օրգանների առաջ հարց բարձրացնեն մեր Նախիջեւանի տարաբախտ ու բազմաշխատ ժողովրդի հալածական դրության, ընդմիշտ վերջ դրվի ու կատարելապես ապահովի նրանց ընտանեկան, իրավաբանական և քաղաքացիական իրավունքները։ Ավելորդ չենք համարում արձանագրել հենց այս համախոսականի մեջ, որ մեր բոլորի միաձայն որոշումն է հիմնովին թողնել այդ շրջանը։ Գաղթել և տեղափոխվել մի ուրիշ վայր...»²⁰։

Նախիջևանի զուտ հայաբնակ և տակավին հայ բնակչություն ունեցող վերջին գյուղերն ամբողջությամբ հայաթափ եղան 1988 թ. նոյեմբերի 22-ին, բացի Յդնայից, որը դատարկվեց 1989 թ. հունիսի 13-ին²¹։ Այսպիսով՝ հազարամյակներ մշտապես հայաբնակ երկրամասում պատմության մեջ առաջին անգամ մարեց հայ կյանքը։

Ինչ վերաբերում է ներկայումս ադրբեջանցի կոչվող բնակչության ծագմանը, ապա սրանք հիմնականում սերում են թյուրքական և քրդական զանազան,

գլխավորապես քենգերիի և դարաջալար ցեղախմբերից։ Ամիդից (Դիարբեքիր) գաղթած քենգերիները, որոնք 1829 թ. գավառում կազմում էին 920 ընտանիք, բնակվում էին Նախիջևան քաղաքում, Ջահրի (Ճահուկ), Գյավուրարիս (Կռուակք), Խոք, Շահթախք, Գերդասար, Վալխր, Նահաջիր, Քյուլք, Մահմուդովա, Քյուլթափա, Կախասփ, Բուլղան, Թրքեշ, Սելեսյուզ, Ղարաբաղլար և Քերիմբեյ-դիգա գյուղերում²², իսկ կիսաքոչվոր կյանք վարող դարաջալարները, որոնք նույն թվականին 660 ընտանիք էին²³, հիմնականում բնակվում էին Վալոց Չորի (Դարալագյազ) շրջանում։ Յարական տիրապետության շրջանում հիշյալ ցեղախմբերը ստանում են մեկ ընդհանրական անվանում՝ թաթարներ, իսկ խորհրդային կարգերի հաստատման հետ հերթական անգամ անվանափոխվելով՝ հորջորջվում ադրբեջանցիներ, որն էլ հորինվում է պատմության մեջ առաջին անգամ արդեն այդ անունով ստեղծված հանրապետության անունով։ Սկզբնական շրջանում, ըստ էության, ադրբեջանցի էին համարվում Ադրբեջան անվանակոչված Հանրապետության բոլոր ազգությունների քաղաքացիները՝ թաթարները, հայերը, ռուսները, լեզգիները, թալիշները և այլք (ինչպես ամերիկացիներ են ԱՄՆ-ի բոլոր ազգությունների քաղաքացիները), սակայն ժամանակի ընթացքում ազգության ադրբեջանցի անվանումն առանձնաշնորհվեց սոսկ նախկին թաթարներին։

Պատմական հուշարձաններ. Նախիջևանի ԻՀ տարածքը Պատմական Հայաստանի նյութական մշակույթի բազմաբնույթ հուշարձաններով առավել հարուստ երկրամասերից է։ Ցավոք, խորհրդային տարիներին երկրամասի մշակութային ժառանգության գերակշիռ մաս կազմող հայկական հուշարձանների հաշվառման ամբողջական աշխատանքներն իրականացնելն այդպես էլ հնարավոր չեղավ ադրբեջանական իշխանությունների՝ արհեստածին և միտումնավոր խոչընդոտներ առաջացնելու պատճառով։ Նախիջևանի ԻՀ տարածքում, որքան էլ ոչ ամբողջական, այնուհանդերձ, հաշվառվել են մինչև Ի դարը ստեղծված հայկական քրիստոնեական պաշտամունքային 218 կառույցներ (վանք, եկեղեցի, մատուռ), 41 բերդ, 26 կամուրջ, 86 քաղաքատեղի և գյուղատեղի, շուրջ 4500 խաչքար և 23000 տապանաքար²⁴, ինչպես նաև մահմեդական ծագում ունեցող (պարսկական, սելջուկյան, թուրք-թաթարա-ադրբեջանական) շուրջ 3 տասնյակ հուշարձաններ։ Վերջիններս, սակայն, թե՛ քանակապես ավելի սակավաթիվ են, և թե՛ մանավանդ ժամանակագրորեն դրանց մեծ մասը վերաբերում է նոր և մինչև իսկ նորագույն շրջանին։

1990-ական թվականների կեսերից ողջ Ադրբեջանում, ներառյալ և մասնավորապես վերջինիս «խնամատարության» ներքո գտնվող Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տարածքում պետական մակարդակով գործադրվող հակահայ քաղաքականության արդյունքում հայկական հուշարձաններն օրավուր ահագնացող անհանդուրժողական և խտրական վերաբերմունքի հետևանքով ավերվում են շարունակաբար և ծրագրված կերպով։

1998-2006 թթ. ընթացքում նախիջևանյան իշխանությունները, հանցավոր ծրագրի իրականացմանը գործակից դարձնելով երկրի զինված ուժերին, հիմնահատակ ոչնչացրին 5-17-րդ դարերով թվագրվող Ջուղայի աշխարհահռչակ գերեզմանոցի՝ շուրջ 3000 գեղաքանդակ և արձանագիր խաչքարերն ու ավելի քան 5000 տապանաքարերը։ Պայթեցումներով և բուլդոզերներով հողի երեսից ջնջեցին Ագուլխի, Ապրակունիսի, Շոռոթի, Քոնայի, Յդնայի վանքերն ու եկեղեցիները, հայ մշակույթի բազում այլ հուշարձաններ։

- Փափազյան Հ.**, Ինչպես գոյացավ Թուրքիա-Նախիջևան տարկյունետրանց սահմանը, «Իրան Նամե», 1995-1996, № 16-17, էջ 6:
- “Брокгауз-Ефрон”։ Энциклопедический словарь, т. X/а, СПб., 1894, с. 557.

- Собрание актов, относящихся к образованию истории армянского народа, часть 1, Москва, 1833, с. 266.

- 1936 թ.-ից Այրևովկասի թաթարներն անվանակոչվեցին ադրբեջանցիներ (տե՛ս **Ալեքբեր** **Ա.**, Исследования по археологии и этнографии Азербайджана, Баку, 1960, ст. 71):

- Վավերագրեր հայ եկեղեցու պատմության. Խորեն Ա Մուրադբեկյան, կազմ.՝ Բեհբուդյան Ս., գիրք Բ, Երևան, 1996, էջ 59:

- Նախիջևանի հիմնահարցը Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում, Երևան, 2001, էջ 116:

- Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., փաստաթղթեր և նյութեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1993, № 1-2, էջ 342:

- Статистическое описание Нахичеванской провинции, составитель **В. Г.**, 1833, СПб, с. 31.

- Кавказский календарь на 1908 г., Тифлис, 1907, с. 330.

- Avakian Sh.**, Nakhichevan. Legal Aspects, Yerevan, 2007, p. 7.

- Ադրբեջանական սովետական հանրագիտարան, հատոր 7, Բաքու, 1983, էջ 173:

- Большая советская энциклопедия, том 41, Москва, 1939, с. 333. Ст'и նաև Большая советская энциклопедия, третье издание, том 17, Москва, 1974, с. 351.

- Малая советская энциклопедия, том 1, Москва, 1933, с. 174.

- Большая советская энциклопедия, третье издание, том 17, Москва, 1974, с. 351.

- Նույն տեղում։

- Նույն տեղում։

- Ադրբեջանական սովետական հանրագիտարան, նույն տեղում։

- Avakian Sh.**, նույն տեղում։

- Նախիջևան-Շարուրը 1918-1921 թթ., նշվ. աշխ., էջ 30-31։

- Համախոսական և լիազորման թերթ, «Նախիջեւան», 1999, № 1-2, էջ 10:

- Վարդանյան Ա.**, Նախիջեւանի հայաթափումը, «Նախիջեւան», 1999, № 1-2, էջ 12:


- Статистическое описание Нахичеванской провинции, с. 31-32.

- Նույն տեղում, էջ 32։

- Այվազյան Ա.**, Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները, Երևան, 1986, էջ 11։



Հայաստանի քարտեզն ըստ Պորթոնուսի, 1482 թ.



Հատված 1544-1545 թթ. Սեբաստիան Մյունստերի կազմած քարտեզից






Հատված 1730 թ. հրատարակված Գեյլիսի քարտեզից














ANCIENT PERSIA
(ELAM)
WITH ADJACENT COUNTRIES
Illustrating the
CAPTIVITIES & PROPHECIES.





Հատված 1865 թ. հրատարակված Կարլ ֆոն Սպրունգերի քարտեզից














Հատված 1919 թ. հունվարին Փարիզի խաղաղության կոնֆերանսում Հայաստանի տարածքային խնդիրները ներկայացնելու համար գեներալ Նազարբեկյանի ցուցումներով Չ. Խանգալյանի կազմած քարտեզից

ՆԱԽԻՋԵՎԱՆ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Քաղաքներ
- Գյուղեր




© ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՄՈՒՆԱՄԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՍ

ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԻՋԵՎԱՆ

ԱՋԳԱԲԱՇԽԱԿԱՆ ՔԱՐՏԵԶ. 1914 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ





1. Դուղանկա
2. Մահմուդբենդ
3. Բաջ-Նորաջեն
4. Մամեդ-Սաբիր
5. Չարչիբողան
6. Մեհրաբ
7. Մյուսլյում
8. Արբաթան
9. Դերվիշլար
10. Մամադա-Դիգա
11. Քերիմբեկ-Դիգա
12. Դուլիբեկ-Դիգա
13. Ջենադին
14. Մումբաթան-Դիգա
15. Քալանթար-Դիգա
16. Դյուխյուն
17. Դյուխյուն-Դիգա
18. Վաղաբեր

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ


○ 1-100	● Հայեր
○ 101-300	● Թուրքեր
○ 301-600	● Մահմեդականացած հայ-կաթոլիկներ
○ 601-1000	● Ասորիներ
○ 1001-1500	● Ռուսներ
○ 1501-2000	● Բրդեր
○ 2001-3000	
○ 3001-4000	
○ 4001-10000	
○ 10000-ից ավելի	

0 5 10 կմ

ՆԱԽԻՋԵՎԱՆ ԿՐԹՈՋԱԽՆԵՐ



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**
- Հայկական (եկեղեցական-ծխական)
 - Վանական
 - Պետական (ռուսական)
 - Մահմեդական
 - 1872 Բացման (հիմնադրման) տարեթիվ



ՅՈՒՅԱԿ

Նախիջևանի քրիստոնեական պաշտամունքային հուշարձանների (վիճակը 1990-ական թվականների սկզբների դրությամբ)

ԳՈՂԹՆ ԳԱՎԱՌ (ՕՐԴՈՒԲԱՂԻ ՇՐՋԱՆ)

N	Հուշարձան	Տեղադրություն	Թվագրում	Վիճակ	Ծանոթություն
1	Սբ. Նշան («Ամարային») եկեղեցի	Ն. Ագուլիս գյուղի հս թաղամասում	Թ դար	կանգուն	
2	Սբ. Երրորդություն (Սբ. Ստեփ.) եկղ.	Ն. Ագուլիս գղ., կից Սբ. Նշան եկ.-ում	ԺԷ դար	կանգուն	
3	Սբ. Մինաս եկեղեցի	Ն. Ագուլիս գյուղի մեջ	ԺԷ դար	ավերակ	վերակառուցվել է ԺԹ դարում
4	Սբ. Սարգիս մատուռ	Ն. Ագուլիս գյուղի տարածքում	վրճրգ. ԺԷ դար	ավերակ	
5	Սբ. Թոփմա վանք	Ագուլիս գյուղի մեջ, «Վանքի» թաղում	մ.թ. Ա դար	կանգուն	
6	Սբ. Ամենափրկիչ (Կուսի) մատուռ	Ագուլիս գղ-ի մեջ, Սբ. Թոփմա վ-ից հս	մ.թ. Ա դար	ավերակ	հիմնել է Բարդուղիմեոս առաք., վրկբ. ԺԷ դար
7	Սբ. Քրիստափոր եկեղեցի	Ագուլիս գյուղի մեջ	մ.թ. Ա դար	կանգուն	հիշարձան Բարդուղիմ. առաք. աշակ, Կոմսի հմն. Թաղեոս առք., վրկբ. 1671-1675 թթ.
8	Սբ. Աստվածածին Մեծ անապատ	Ագուլիս գյուղի մեջ	մ.թ. Ա դար	կանգուն	վերակառուցվել է ԺԷ դար
9	Սբ. Ստեփանոս եկեղեցի	Ագուլիս գյուղի հս-ալ թաղամասում	ԺԲ-ԺԳ դդ.	կիսավեր	
10	Սբ. Շմավոն եկեղեցի	Ագուլիս գյուղի մեջ	վրկբ. ԺԷ դար	կիսավեր	
11	Սբ. Հովհաննես եկեղեցի	Ագուլիս գյուղի մեջ	վրկբ. ԺԷ դար	կիսավեր	
12	Սբ. Հակոբ եկեղեցի	Ագուլիս գյուղի մեջ	վրկբ. ԺԷ դար	կանգուն	հիշվում է 1478 թ., վերակառուցվել է 1901 թ.
13	Սբ. Գևորգ մատուռ	Ն. Ազա գյուղի հս-ամ կողմում	ԺՋ-ԺԷ դդ.	ավերակ	վերանորոգվել է ԺԹ դարում
14	Սբ. Հրեշտակապետաց (Սբ. Փրկիչ) եկ.	Ն. Ազա գյուղի մեջ	միջնադար	ավերակ	առաջին անգամ հիշվում է 1902 թ.
15	Սբ. Աստվածածին եկեղեցի	Վ. Ազա գյուղի ամ կողմում	միջնադար	կիսավեր	առաջին անգամ հիշվում է 1841 թ.
16	Սբ. Ստեփանոս եկեղեցի	Անապատ գյուղի մեջ	ԺԴ-ԺԵ դդ.	ավերակ	առաջին անգամ հիշվում է 1671 թ.
17	Սբ. Հռիփսիմե մատուռ	Անապատ գյուղից ալ	ԺԹ դար	ավերակ	
18	Սբ. Հովհաննես եկեղեցի	Բահրուտ գյուղի մեջ	միջնադար Ե դար	կանգուն	առաջին անգամ հիշվում է 1669 թ.
19	Սբ. Նշան (Կոպտատափ) վանք	Բիստ գյուղից 1 կմ հս	ԺԲ-ԺԳ դդ.	ավերակառուցվել է 1668 թ.	
20	Սբ. Աստվածածին վանք	Բիստ գյուղի կենտրոնում	ԺԲ-ԺԳ դդ.	կանգուն	հիշվում է 1439 թ., վերանորոգվել է 1687, 1877 թթ.
21	Սբ. Ստեփանոս եկեղեցի	Բիստ գյուղի մեջ	ԺԷ դար	ավերակ	հիշվում է 1687 թ.
22	Սբ. Սարգիս եկեղեցի	Բիստ գյուղից 3 կմ հր	ԺԷ դար	ավերակ	
23	Սբ. Կարապետ մատուռ	Բիստ գյուղից 5 կմ ամ	ԺԷ դար	ավերակ	
24	Սբ. Հակոբ եկեղեցի	Գանձակ գյուղի մեջ	ԺԴ-ԺԵ դդ.	ավերակ	
25	Սբ. Անդրեաս եկեղեցի	Գ-անձակ գյուղի մեջ	միջնադար	ավերակ	
26	Սբ. Հովհաննես եկեղեցի	Գ-անձակ գյուղի մեջ	միջնադար	ավերակ	
27	Սբ. Խորան եկեղեցի	Դ-աստակ գյուղի հս մասում	ԺԲ-ԺԳ դդ.	կիսավեր	
28	Սբ. Սարգիս մատուռ	Դեր գյուղից 1,5 կմ հս-ամ	ԺԴ-ԺԵ դդ.	կանգուն	
29	Սբ. Աստվածածին եկեղեցի	Դեր գյուղի մեջ	ԺԷ դար	ավերակ	
30	Սբ. Գևորգ (Սբ. Ստեփանոս) եկեղեցի	Դիսար (Դեղսար) գյուղի մեջ	միջնադար	ավերակ	
31	Եկեղեցի	Խանադա (Խողվան) գյուղի մեջ	միջնադար	ավերակ	
32	Եկեղեցի	Խուրս գյուղի մեջ	միջնադար	ավերակ	
33	Սբ. Աստվածածին եկեղեցի	Ն. Հանդամեջ գյուղի մեջ	միջնադար	ավերակ	
34	Մեարոպավանք	Մեարոպավան գյուղի ամ կողմում	456 թ.	ավերակ	
35	Սբ. Աստվածածին մատուռ	Մեարոպավան գյուղի հս-ալ մասում	ԺԴ-ԺԵ դդ.	ավերակ	
36	Սբ. Աստվածածին եկ. (Ազնամեր գտղի).	Մեարոպավան գյուղից 6 կմ հս-ալ	միջնադար	ավերակ	
37	Սբ. Գայանե մատուռ	Մեարոպավան գյուղի հս կողմում	ԺԹ դար	կիսավեր	
38	«Մարի Սուրբ Նշան» մատուռ	Մեարոպավան գյուղից 19 կմ հր-ալ	ԺԹ դար	ավերակ	
39	Սբ. Հռիփսիմե սրբատեղի	Մեարոպավան գյուղի մեջ	ԺԹ դար	ավերակ	
40	Սբ. Ստեփանոս վանք	Մցգուն գյուղատեղիում	ԺԲ-ԺԳ դդ.	կանգուն	
41	Թարգմանչաց վանք	Նորակերտ գյուղի մեջ	1662 թ.	կիսավեր	
42	Եկեղեցի	Նորակերտ գյուղի մեջ	միջնադար	ավերակ	
43	Եկեղեցի	Նուսնուս գյուղի մեջ	միջնադար	ավերակ	
44	Սբ. Ստեփանոս վանք	Շրջու գյուղատեղիի հս-ամ կողմում	ԺԷ դար	կանգուն	
45	Սբ. Գևորգ եկեղեցի	Ռբևան (Ռբովանց) գյուղի մեջ	ԺԲ-ԺԳ դդ.	ավերակ	
46	Սբ. Ստեփանոս եկեղեցի	Ոհողի (Ալահի) գյուղի մեջ	միջնադար	կիսավեր	
47	Սբ. Խաչ (Սբ. Հռիփսիմե) վանք	Ոհողի (Ալահի) գյուղի մեջ	ԺԴ-ԺԵ դդ.	ավերակ	
48	Սբ. Աստվածածին եկեղեցի	Ռ-ամիս գյուղի մեջ	ԺԲ դար	կանգուն	
49	Սբ. Հովհաննես (Սբ. Հակոբ) եկեղեցի	Ռ-ամիս գյուղի մեջ	միջնադար	ավերակ	
50	Սբ. Սարգիս եկեղեցի	Ռ-ամիս գյուղից 5 կմ հր	միջնադար	կիսավեր	
51	Սբ. Թոփմա վանք	Վանանդ գյուղի մեջ	մ.թ. Ա դար	ավերակ	
52	Մատուռ	Վանանդ գյուղի հր-ամ մասում	մ.թ. Ա դար	ավերակ	
53	Սբ. Խաչ վանք	Վանանդ գյուղի հր-ամ մասում	1457 թ.	ավերակ	
54	Սբ. Հովհաննես եկեղեցի	Վանանդ գյուղի մեջ	միջնադար	ավերակ	
55	«Խաչի քար» սրբատեղի	Վարակերտ (Վերիգետ) գ-ից 2,5 կմ հս	ԺԲ-ԺԳ դդ.	ավերակ	
56	Սբ. Ստեփանոս եկեղեցի	Վարակերտ (Վերիգետ) գյուղի մեջ	միջնադար	ավերակ	
57	Սբ. Մինաս եկեղեցի	Վարակերտ (Վերիգետ) գյուղի մեջ	միջնադար	ավերակ	
58	Սբ. Աստվածածին եկեղեցի	Տանակերտ գյուղի հս-ալ մասում	ԺԷ դար	կանգուն	
59	Սբ. Հովհաննես եկեղեցի	Տանակերտ գյուղից 1 կմ հր	ԺԷ դար	կիսավեր	
60	Սբ. Ստեփանոս վանք	Տկի գյուղից 3 կմ հր, Նավուշ գոտիում	ԺԱ-ԺԲ դդ.	կանգուն	
61	Տկիի (Սբ. Թումա) վանք	Տկի գյուղի մեջ	ԺԴ դար	ավերակ	
62	Սբ. Ստեփանոս եկեղեցի	Տրոնիս գյուղի հս-ամ մասում	ԺԷ դար	ավերակ	
63	Սբ. Աստվածածին մատուռ	Տրոնիս գյուղի հր-ամ մասում	ԺԹ դար	ավերակ	
64	Սբ. Աստվածածին վանք	Յղնա գյուղի հս-ալ մասում	ԺԲ-ԺԳ դդ.	կանգուն	
65	Սբ. Գևորգ եկեղեցի	Յղնա գյուղի մեջ	միջնադար	ավերակ	
66	Սբ. Սարգիս եկեղեցի	Յղնա գյուղի կենտրոնում	ԺԳ-ԺԴ դդ.	կանգուն	
67	Խաչավանք	Ունուս գյուղի մերձակայքում	1687 թ.	կանգուն	
68	Սբ. Հակոբ վանք	Փառակա գյուղի հս-ամ մասում	ԺԲ-ԺԳ դդ.	կանգուն	
69	Սբ. Շմավոն եկեղեցի	Փառակա գյուղի հս-ամ մասում	ԺԲ-ԺԳ դդ.	կանգուն	

70 Սբ. Գևորգ (Չորավանք) վանք
71 Սբ. Ստեփանոս եկեղեցի
72 Սբ. Եղիա մարգարե մատուռ
73 «Հուռումսիմա խաչ» սրբաղ.
74 Սբ. Ստեփանոս եկեղեցի
75 Սբ. Սարգիս մատուռ
76 Սբ. Ստեփանոս եկեղեցի
77 Սբ. Աստվածածին եկեղեցի
78 Սբ. Նևսկի ռուս. եկեղեցի

Փառակա գյուղի տարածքում
Փառակա գյուղից 1,5 կմ ամ
Փառակա գյուղի հր-ամ մասում
Փառակա գյուղի հս-ալ կողմում
Քաղաքիկ գյուղի հս-ալ մասում
Քաղաքիկ գյուղի հս-ալ մասում
Օրդուբաղ քաղաքի մեջ
Օրդուբաղ քաղաքի մեջ
Օրդուբաղ քաղաքի մեջ

ԺԴ–ԺԵ դդ.
ԺՋ-ԺԷ դդ.
ԺԷ դդ.
միջնադար
ԺԲ-ԺԳ դդ.
ԺՋ-ԺԷ դդ.
1830 թ.
ԺԹ դար
1862 թ.

ավերակ
ավերակ
կիսավեր
ավերակ
կանգուն
ավերակ
կիսավեր
ավերակ

առաջին հիշատակությունը՝ 1495 թ.

վերակառուցվել է ԺԹ դարում
վերանորոգվել է ԺԹ դարում
վերանորոգվել է ԺԷ, ԺԹ դդ.

առաջին հիշատակությունը՝ 1903 թ.
կառուցող՝ ագուլեցի Արասխանյանցներ

ԵՐՆՋԱԿ ԳԱՎԱՌ (ԶՈՒԼՖԱՅԻ ՇՐՋԱՆ)

Աբրակունիս գ-ի մեջ, Սբ. Կոպ-ից հս-ալ
Սբ. Գևորգ եկեղեցուց հր
Աբրակունիս գյուղի մեջ
Աբրակունիս գյուղի մեջ
Ն. Անկուզեթ գյուղատեղիում
Վ. Անկուզեթ գյուղատեղիում
Ապարաներ գյուղի մեջ
Ապարաներ գյուղի մեջ
Հայթաղ գյուղում
Բերդիկ գյուղի մեջ
Գաղ գյուղի մեջ
Գաղ գյուղից 450 մ հս-ամ

Գաղ գյուղի հս կողմում
Գաղ գյուղի Սբ. Հովի. եկ-ուց ամ
Գաղ գյուղի Սբ. Նահատակից ամ
Գաղ գյուղի ամ կողմում
Գաղ գյուղի ալ կողմում
Գաղ գղ-ի հր-ամ կողմում, այգիներում
Գաղի բերդի ամ կողմում
Երնջակ բերդից 3 կմ հս-ալ
Երնջակի Սբ. Գևորգ վ-ից 200 մ հս

«Ջավաչրի վանք» գյուղատեղիում
Թեչվազ գյուղի մեջ
Խոշկաշեն գյուղի մեջ
Հին Ջուղայի գերեզմանոցից հս-ամ
Հին Ջուղա քաղաքատեղիի ալ կողմ.
Սբ. Աստվածածին եկեղեցուց հս

Հին Ջուղայի քոջտղիի տարածքում
Հին Ջուղայի քոջղտղիի տարածքում
Հին Ջուղայի քոջղտղիի կենտրոնում
Դազանչի գյուղի հր-ալ մասում
Դազանչի գյուղի մեջ
Նահաջիր գոտղիի հր-ալ մասում

Նորաշեն գյուղի կենտրոնում
Նորաշեն գյուղի տարածքում
Նորաշեն գյուղի հս-ալ կողմում
Նորաշեն գյուղի տարածքում
Նորաշեն գյուղի տարածքում
Շոռոք գյուղից 4 կմ հր, լեռան վրա
Շոռոք գյուղի մեջ, Սբ. Հլբբ. եկ-ուց հր
Շոռոք գյուղից 1 կմ հս
Շոռոք գյուղի կենտրոնում
Շոռոք գյուղի հս-ալ կողմում
Շոռոք գյուղի մեջ
Շոռոք գյուղի ալ կողմում
Ջուղա գյուղի հս-ամ մասում
Մալիթաղ գյուղի մեջ
Մալիթաղ գյուղի տարածքում

Հին Փորաղաշտ գոտղիից 5 կմ հս

Հին Փորաղաշտ գոտղիի ալ կողմում
Հին Փորաղաշտ գյուղատեղիում

Նոր Փորաղաշտ գոտղիից 5 կմ հս
Քոնա գյուղի հր-ալ մասում
Քոնա Սբ. Ածծ-ից 700 մ հր-ամ

ԺԱ-ԺԲ դդ.
ԺԳ-ԺԴ դդ.
1381 թ.
1868 թ.

վրկբ. ԺԷ դար
1719 թ.
ԺԲ-ԺԳ դդ.
միջնադար
ԺԹ դարի վերջ
վրկբ. ԺԷ դար
վրկբ. 1658/59 թթ.
ԺՋ-ԺԷ դդ.
ԺՋ-ԺԷ դդ.
վրկբ. ԺԷ դար
վրկբ. ԺԷ դար
վրկբ. ԺԹ դար

միջնադար
վրկբ. ԺԷ դար
միջնադար
վրկբ. ԺԷ դար

ԺԲ-ԺԳ դդ.
ԺԳ-ԺԴ դդ.
ԺԳ-ԺԴ դդ.
ԺԲ-ԺԳ դդ.
վրկբ. 1654 թ.

միջնադար
951 թ.
միջնադար
միջնադար
միջնադար
վրկբ. ԺԹ դար

միջնադար
վրկբ. 1613 թ.
վրկբ. 1631 թ.
վրկբ. 1642 թ.
վրկբ. 1708 թ.

վրկբ. ԺԹ դար
վրկբ. ԺԹ դար
1851 թ.
ԺԳ-ԺԴ դդ.
1385 թ.

ԺՋ-ԺԷ դդ.

վրկբ. ԺԷ դար

1681 թ.

ԺԹ դար
1329 թ.

վրկբ. ԺԷ դար

ավերակ
ավերակ
կիսավեր

ավերակ
ավերակ

կանգուն

կիսավեր
ավերակ

ավերակ
ավերակ

կիսավեր
ավերակ

կիսավեր
կանգուն
ավերակ

կանգուն
ավերակ
ավերակ

ավերակ
կանգուն
ավերակ

կիսավեր
կանգուն
ավերակ

ավերակ
ավերակ

կիսավեր
կիսավեր

ավերակ

ավերակ

վրկբ. 1648-49 թթ., ճարտ. Դ-ավիթ և Հովհաննես

առաջին հիշատակությունը՝ 1870 թ.

առաջին հիշատակությունը՝ 1841 թ.

ավերակ

կանգուն
կիսավեր
ավերակ
ավերակ

խորհրդային տարիներին՝ պահեստ շուրջը՝ ԺԷ դարի խաչքարեր

շուրջը՝ ԺԷ դարի խաչքարեր

ավերակ

ավերակ

ավերակ

կանգուն

կիսավեր

կանգուն

ավերակ

ավերակ

կանգուն

ավերակ

կանգուն

ավերակ

ավերակ

կանգուն

ավերակ

կիսավեր

կանգուն

ավերակ

ավերակ

կանգուն

ավերակ

կիսավեր

կիսավեր

ավերակ

ավերակ







134 Սբ. Աստվածածին եկեղեցի

135 Կույս Վարվառ մատուռ

136 Մատուռ


137 Սբ. Աստվածածին եկեղեցի

138 Սբ. Գրիգոր եկ.



1	2	3	4	5
6	7	8	9	10
11	12	13	14	15
17	18	19	20	21


1. Ագուլիս. Սր. Թովմա առաքյալ վանքի եկեղեցին հարավ-արևմուտքից
2. Հին Ջուղա. «Պոմբրոզի ժամ» կամ Տվարածի (Հովվի) եկեղեցին
3. Ագուլիս. Սր. Աստվածածին վանքը հարավ-արևմուտքից
4. Նախիջևան. Սր. Գևորգ եկեղեցին հարավ-արևմուտքից
5. Վերին Ագուլիս. Սր. Քրիստափոր եկեղեցին հարավից
6. Օծոփ. Օծոփավանքի Սր. Աստվածածին եկեղեցին հարավ-արևմուտքից
7. Ճահուկ. Սր. Հովհաննես եկեղեցին հյուսիս-արևմուտքից
8. Ագուլիս. Սր. Ստեփանոս եկեղեցին հարավից
9. Մեսրոպովան. Սր. Մեսրոպ Մաշտոց վանքը հարավից
10. Շամեն. Սր. Խաչ վանքի եկեղեցին հարավ-արևմուտքից
11. Յղնա. Սր. Աստվածածին եկեղեցին հարավ-արևելքից
12. Յղնա. Սր. Աստվածածին եկեղեցու բարձրաքանդակները
13. Յղնա. Սր. Աստվածածին եկեղեցու բարձրաքանդակները
14. Գաղ. Սր. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին հարավ-արևմուտքից
15. Աբրակունիս. Սր. Կարապետ վանքի եկեղեցին արևմուտքից
16. Ագուլիս. Սր. Հակոբ հայրապետ եկեղեցին արևմուտքից
17. Վերին Ագուլիս. Սր. Քրիստափոր եկեղեցին արևմուտքից
18. Ռամիս. Սր. Աստվածածին եկեղեցին հարավ-արևմուտքից
19. Շոռոք. Սր. Հակոբ եկեղեցին հարավ-արևմուտքից
20. Քոնա. Սր. Աստվածածին վանքի եկեղեցին
21. Ներքին կամ Դաշտ Ագուլիս. Սր. Նշան կամ Անառային և Սր. Երրորդություն եկեղեցիները հարավ-արևմուտքից





1		
	2	3
4	5	
	6	7
8	9	10

1. Հատված գերեզմանոցից, լուս.՝ Արամ Վրույրի, 1915 թ.
2. Խաչքար, լուս.՝ Ռաֆայել Աբգարյանի, 1987 թ.
3. Հատված գերեզմանոցից, լուս.՝ Ջավեն Սարգսյանի, 1987 թ.
4. Հատված գերեզմանոցից, լուս.՝ Ռաֆայել Աբգարյանի, 1987 թ.
5. Հատված գերեզմանոցից, լուս.՝ Ջավեն Սարգսյանի, 1987 թ.
6. Գերեզմանոցը 2005 թ. դեկտեմբերին աղբբեջանական զինուժի ձեռքով ոչնչացվելու պահին, լուս.՝ Արթուր Գևորգյանի (Թավրիզ)
7. Գերեզմանոցը բուլդոզերով ոչնչացնելու պահին, լուս.՝ ճարտ. Արփիար Պետրոսյանի (Թեհրան), 1998 թ.
8. Հատված գերեզմանոցից, լուս.՝ Ռաֆայել Աբգարյանի, 1987 թ.
9. Գերեզմանոցը 2005 թ. դեկտեմբերին ոչնչացման ընթացքում, լուս.՝ Արթուր Գևորգյանի (Թավրիզ)
10. Իսպառ անհետացված երեք բլուրների վրա տարածված գերեզմանոցի տեղում աղբբեջանական իշխանությունների հիմնած ռազմական հենակետն ու հրաձգարանը, լուս.՝ 2006 թ. մարտ



ՅՈՒՅԱԿ

Մահմեդական (պարսկական, սելջուկյան, թաթարական՝ «1936-ից՝ ադրբեջանական») հուշարձանների

ՆԱԽԻՋԵՎԱՆ ԳԱՎԱՌ (ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՇՐՋԱՆ)

N	Հուշարձան	Տեղադրություն	Թվագրում	Վիճակ	Անվանում
1	Սզկիթ	Բուլղան գյուղում	ԺԹ-Ի դդ.		
2	Սզկիթ	Դիդուվար գյուղում	ԺԹ-Ի դդ.		
3	Սզկիթ	Թազաքենդ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
4	Սզկիթ	Թմբուլ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
5	Սզկիթ	Հինջաբ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
6	Սզկիթ	Նեհրամ գյուղում	1894-1895 թթ.		«Գյուլյոս»
7	Սզկիթ	Նեհրամ գյուղում	1897-1898 թթ.		
8	Սզկիթ	Նեհրամ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
9	Սզկիթ	Նեհրամ գյուղում	1957-1958 թթ.		
10	Դամբարան	Նեհրամ գյուղում	1960-1961 թթ.		«Իմամզադե»
11	Դամբարան	Ղարաբաղլար գյուղում	ԺԴ դար		
12	2 մինարե	Ղարաբաղլար գյուղում	ԺԴ դար		
13	Սզկիթ	Ղարաչուղ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
14	Սզկիթ	Ղոշաղիգա գյուղում	ԺԹ-Ի դդ.		
15	Սզկիթ	Ղոշաղիգա գյուղում	ԺԹ-Ի դդ.		
17	Սզկիթ	Ճահուկ (Ջահրի) գյուղում	ԺԹ-Ի դդ.		
18	Սզկիթ	Ճահուկ (Ջահրի) գյուղում	ԺԹ-Ի դդ.		
19	Սզկիթ	Ճահուկ (Ջահրի) գյուղում	ԺԹ-Ի դդ.		
20	Դամբարան	Նախիջևան քաղաքում	1162 թ.	կանգուն	«Աջեմի աբու Բաքր»
21	Դամբարան	Նախիջևան քաղաքում	1186 թ.	կանգուն	«Մոմինե խաթուն»
22	Սզկիթ	Նախիջևան քաղաքում	1894 թ.	ավերակ	«Ջաֆարի»
23	Սզկիթ	Ն. Ուզուն-Օբա գյուղում	ԺԹ-Ի դար		
24	Սզկիթ	Շաքարաբաղ գյուղում	ԺԹ-Ի դար		
25	Սզկիթ	Չեշմա-բասար գյուղում	ԺԹ-Ի դդ.		
26	Սզկիթ	Պահեստ (Փայիզ) գյուղում	ԺԹ-Ի դդ.		
27	Սզկիթ	Սիրաբ գյուղում	ԺԹ-Ի դար		
28	Սզկիթ	Մուստ գյուղում	ԺԹ-Ի դար		
29	Սզկիթ	Վայխր գյուղում	ԺԹ-Ի դար		
30	Սզկիթ	Վ. Ուզուն-Օբա գյուղում	ԺԹ-Ի դար		

ՃԱՀՈՒԿ ԳԱՎԱՌ (ՇԱՀԲՈՒՋԻ ՇՐՋԱՆ)

31	Սզկիթ	Ջեյնաղին գյուղում	ԺԹ-Ի դար		
32	Սզկիթ	Թիքքեշ գյուղում	ԺԹ-Ի դար		
33	Սզկիթ	Խնձիթակ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
34	Սզկիթ	Կուքի գյուղում	ԺԹ-Ի դար		
35	Սզկիթ	Ղարաբոյա գյուղում	ԺԹ-Ի դար		
36	Սզկիթ	Ն. Ռամեշին գյուղում	ԺԹ-Ի դդ.		
37	Սզկիթ	Շահբուզ գյուղում	ԺԹ-Ի դար		
38	Սզկիթ	Վ. Ռամեշին գյուղում	ԺԹ-Ի դար		
39	Սզկիթ	Մեկեսուզ գյուղում	ԺԹ-Ի դար		

ՇԱՐՈՒՐԻ ԳԱՎԱՌ (ԻԼՅԻՉԵՎՍԿԻ ՇՐՋԱՆ)

40	Սզկիթ	Ախտաի գյուղում	ԺԹ-Ի դար		
41	Սզկիթ	Ադահմետ գյուղում	ԺԹ-Ի դար		
42	Սզկիթ	Արաբ-Ենգիջա գյուղում	ԺԹ-Ի դար		
43	Սզկիթ	Արալխ-բեկ գյուղում	ԺԹ-Ի դար		
44	Սզկիթ	Արալխ-խան գյուղում	ԺԹ-Ի դար		
45	Սզկիթ	Արաբթան գյուղում	ԺԹ-Ի դար		
46	Սզկիթ	Բաբաքի գյուղում	ԺԹ-Ի դար		
47	Սզկիթ	Բաշ-Նորաշեն գյուղում	ԺԹ-Ի դար		
48	Սզկիթ	Դաշարխ գյուղում	ԺԹ-Ի դար		
49	Սզկիթ	Դարվիշլար գյուղում	ԺԹ-Ի դար		
50	Սզկիթ	Դիաղին գյուղում	ԺԹ-Ի դար		

51	Սզկիթ	Դուդանգա գյուղում	ԺԹ-Ի դար		
52	Սզկիթ	Ենգիջա գյուղում	ԺԹ-Ի դար		
53	Սզկիթ	Ջեյվա գյուղում	ԺԹ-Ի դար		
54	Սզկիթ	Թազաքենդ գյուղում	ԺԹ-Ի դար		
55	Սզկիթ	Թունասլու գյուղում	ԺԹ-Ի դար		
56	Սզկիթ	Իբադուլա գյուղում	ԺԹ-Ի դար		
57	Սզկիթ	Խալխալ գյուղում	ԺԹ-Ի դար		
58	Սզկիթ	Խոք գյուղում	ԺԹ-Ի դար		
59	Սզկիթ	Ղաբուլու գյուղում	ԺԹ-Ի դար		
60	Դամբարան	Ղարաբաղլար գյուղում	ԺԹ-Ի դար		
61	Մինարե	Ղարաբաղլար գյուղում	ԺԹ-Ի դար		
62	Մինարե	Ղարաբաղլար գյուղում	ԺԹ-Ի դար		
63	Սզկիթ	Ղարաբորջ գյուղում	ԺԹ-Ի դար		
64	Սզկիթ	Ղարահասանլու գյուղում	ԺԹ-Ի դար		
65	Սզկիթ	Ղշլաղ-աբաս գյուղում	ԺԹ-Ի դար		
66	Սզկիթ	Ղոռչուլու գյուղում	ԺԹ-Ի դար		
67	Սզկիթ	Ղուշշի-Դեմիրշի գյուղում	ԺԹ-Ի դար		
68	Սզկիթ	Ղուշշի-Դեմիրշի գյուղում	ԺԹ-Ի դար		
69	Սզկիթ	Մախթա գյուղում	ԺԹ-Ի դար		
70	Սզկիթ	Մահմուդքենդ գյուղում	ԺԹ-Ի դար		
71	Սզկիթ	Մոտանլու գյուղում	ԺԹ-Ի դար		
72	Սզկիթ	Մոտանլու գյուղում	ԺԹ-Ի դար		
73	Սզկիթ	Յակուզ-աղաջ գյուղում	ԺԹ-Ի դար		
74	Սզկիթ	Յուքթչի գյուղում	ԺԹ-Ի դար		
75	Սզկիթ	Շահթախտ գյուղում	ԺԹ-Ի դար		
76	Սզկիթ	Շահրիար գյուղում	ԺԹ-Ի դար		
77	Սզկիթ	Չարչիբոդան գյուղում	ԺԹ-Ի դար		
78	Սզկիթ	Չոմախտուր գյուղում	ԺԹ-Ի դար		
79	Սզկիթ	Չոմախտուր գյուղում	ԺԹ-Ի դար		
80	Սզկիթ	Մադարակ գյուղում	1843 թ.		
81	Սզկիթ	Մադարակ գյուղում	1892 թ.		
82	Սզկիթ	Մադարակ գյուղում	1909 թ.		«Խակվեալ»
83	Սզկիթ	Վայխր գյուղում	ԺԹ-Ի դար		
84	Սզկիթ	Տանձիկ գյուղում	ԺԹ-Ի դար		
85	Սզկիթ	Տանձիկ գյուղում	ԺԹ-Ի դար		
86	Սզկիթ	Տանձիկ գյուղում	ԺԹ-Ի դար		
87	Սզկիթ	Փարչի գյուղում	ԺԹ-Ի դար		
88	Սզկիթ	Փուսյան գյուղում	ԺԹ-Ի դար		
89	Սզկիթ	Քարխուն գյուղում	ԺԹ-Ի դար		
90	Սզկիթ	Քեշտազ գյուղում	ԺԹ-Ի դար		
91	Սզկիթ	Քյարիմբեկլու գյուղում	ԺԹ-Ի դար		
92	Սզկիթ	Քիվրաղ գյուղում	ԺԹ-Ի դար		
93	Սզկիթ	Քյուրդքենդ գյուղում	ԺԹ-Ի դար		
94	Սզկիթ	Քոսաջան գյուղում	ԺԹ-Ի դար		

ԵՐՆՋԱԿ ԳԱՎԱՌ (ՋՈՒԼՖԱՅԻ ՇՐՋԱՆ)

95	Սզկիթ	Արագին գյուղում	ԺԹ-Ի դդ.		
96	Սզկիթ	Բաշ-Անգլիր գյուղում	ԺԹ-Ի դդ.		
97	Սզկիթ	Դիբ-Անգլիր գյուղում	ԺԹ-Ի դդ.		
98	Սզկիթ	Թեյվազ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
99	Սզկիթ	Խոշկաշեն գյուղում	ԺԹ-Ի դդ.		
100	Սզկիթ	Միլախ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
101	Սզկիթ	Յալջի գյուղում	ԺԹ-Ի դդ.		
102	Սզկիթ	Յալջի գյուղում	ԺԹ-Ի դդ.		
103	Սզկիթ	Յալջի գյուղում	ԺԹ-Ի դդ.		
104	Սզկիթ	Նորաշեն գյուղում	ԺԹ-Ի դդ.		
105	Սզկիթ	Մալբաղ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
106	Սզկիթ	Քյարիմ-դուլիդիգա գյուղում	ԺԹ-Ի դդ.		
107	Սզկիթ	Քոնա գյուղում	ԺԹ-Ի դդ.		

ԳՈՂԹՆ ԳԱՎԱՌ (ՕՐԴՈՒԲԱԴԻ ՇՐՋԱՆ)


108	Դամբարան	Ազա գյուղում	1472-1473 թթ.		
109	Սզկիթ	Ադրի գյուղում	ԺԹ-Ի դդ.		
110	Սզկիթ	Ադրի գյուղում	ԺԹ-Ի դդ.		
111	Սզկիթ	Անապատ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
112	Սզկիթ	Բազմարի գյուղում	ԺԹ-Ի դդ.		
113	Սզկիթ	Բեխրուտ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
114	Սզկիթ	Բիլլավ (Բղև) գյուղում			
115	Սզկիթ	Գանձակ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
116	Սզկիթ	Դաստա գյուղում	1610-1611 թթ.	ավերակ	
117	Սզկիթ	Դաստա գյուղում	ԺԹ-Ի դդ.		
118	Սզկիթ	Դեղսար գյուղում	ԺԹ-Ի դդ.		
119	Սզկիթ	Դիգա (Բաշ) գյուղում	ԺԹ-Ի դդ.		
120	Սզկիթ	Դռնիս գյուղում	ԺԹ-Ի դդ.		
121	Դամբարան	Խանադա գյուղում	ԺԲ-ԺԳ դդ.		«Շեյխ Խորասան»
122	Դամբարան	Խանադա գյուղում	1495-1496 թթ.		
123	Սզկիթ	Խանադա գյուղում	ԺԹ-Ի դդ.		
124	Սզկիթ	Ն. Ազա գյուղում	ԺԹ-Ի դդ.		
125	Սզկիթ	Ն. Հանդամեջ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
126	Սզկիթ	Նասիրաբաղ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
127	Սզկիթ	Նիզդե գյուղում	ԺԹ-Ի դդ.		
128	Սզկիթ	Նյուրգյուղ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
129	Սզկիթ	Նունուս գյուղում	1732-1733 թթ.		
130	Սզկիթ	Նունուս գյուղում	1917 թ.		
131	Սզկիթ	Նունուս գյուղում			
132	Սզկիթ	Վադավեր գյուղում	ԺԹ-Ի դդ.		
133	Սզկիթ	Վանանդ գյուղում	1324-1325 թթ.		
134	Սզկիթ	Վանանդ գյուղում	1732 թ.		
135	Սզկիթ	Վանանդ գյուղում	1890 թ.		
136	Սզկիթ	Վանանդ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
137	Սզկիթ	Վանանդ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
138	Սզկիթ	Վանանդ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
139	Սզկիթ	Վ. Ազուլիս գյուղում	ԺԹ-Ի դդ.		
140	Սզկիթ	Վ. Ազուլիս գյուղում	ԺԹ-Ի դդ.		
141	Սզկիթ	Ն. Հանդամեջ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
142	Սզկիթ	Ն. Հանդամեջ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
143	Սզկիթ	Տևի գյուղում	ԺԹ-Ի դդ.		
144	Սզկիթ	Ունուս գյուղում	ԺԹ-Ի դդ.		
145	Սզկիթ	Ուստուփի գյուղում	ԺԹ-Ի դդ.		
146	Սզկիթ	Փառակա գյուղում	ԺԹ-Ի դդ.		
147	Կոթող	Քեթան գյուղում	1470-1471 թթ.		
148	Սզկիթ	Քիլիթ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
149	Սզկիթ	Քյանգահ գյուղում	ԺԹ-Ի դդ.		
150	Սզկիթ	Օրդուբաղ քաղաքում	1604 թ.		
151	Սզկիթ	Օրդուբաղ քաղաքում	1774-1775 թթ.		«Մինգիա»
152	Սզկիթ	Օրդուբաղ քաղաքում	1825-1826 թթ.		«Թեքեշիլի»
153	Դամբարան	Օրդուբաղ քաղաքում	1848 թ.		«Ղարա-Փիլ»
154	Սզկիթ	Օրդուբաղ քաղաքում	1867-1868 թթ.		«Վերին Ամբարաս»
155	Սզկիթ	Օրդուբաղ քաղաքում	ԺԹ դար	ավերակ	«Քուրդաթալ»
156	Սզկիթ	Օրդուբաղ քաղաքում	1901-1902 թթ.		
157-					
-187	Սզկիթ (31 հատ)	Օրդուբաղ քաղաքում	ԺԹ-Ի դդ.		

Ծանոթություն. ԺԹ դարից ավելի վաղ թվագրվող հուշարձաններն ունեն պարսկական կան սելջուկյան ծագում և որևէ առնչություն չունեն ԺԹ դարի ընթացքում նստակեցության անցած և մինչև 1935 թ. ընդհանրական անվամբ թաթար, ապա ադրբեջանցի անվանափոխված ցեղերի կառուցած հուշարձանների հետ:

ՆԱԽԻՋԵՎԱՆ

ՄՋԿԻԹՆԵՐ, ՄԻՆԱՐԵՆԵՐ, ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

XII-XVIII դդ. XIX-XX դդ.

		Սգկիթ
		Դամբարան
		Միևարե

0 5 10 կմ



Ի Ր Ա Ն

1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՑ Ի ՎԵՐ ՈՉՆՉԱՅՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Ներքին Ագուլիսի Անառային կամ Սր. Նշան և Սր. Ստեփանոս կամ Սր. Երրորդություն եկեղեցիներ




Վերին Ագուլիսի Սր. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցի



Վերին Ագուլիսի Սր. Աստվածածնի Մեծ անապատ վանք



Վերին Ագուլիսի Սր. Քրիստափոր եկեղեցի





Վերին Ագուլխի Սբ. Թովմա վանք




Վերին Ագուլխի Սբ. Ստեփանոս եկեղեցի



Վերին Ագուլխի Սբ. Շմավոն եկեղեցի




Վերին Ագուլխի Սբ. Հակոբ-Հայրապետ եկեղեցի






Ախալատի Սբ. Աստվածածին եկեղեցի



Նախիջևանի Սբ. Երրորդություն եկեղեցի



Այրապտնիսի Սբ. Կարապետ վանք





ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE (RAA)



ՆԱԽԻՉԵՎԱՆ Ք Ա Ր Տ Ե Չ Ա Գ Ի Ր Ք

Տեքստը՝ Մամվել Կարապետյանի

Լուսանկարները՝ Ռաֆայել Աբգարյանի, Ջավեն Սարգսյանի, Արզամ Այվազյանի, Արփիար Պետրոսյանի, Արթուր Գևորգյանի

20, 21, 22, 23, 24, 27, 31 էջերի քարտեզները և հուշարձանների ցուցակները՝ Մամվել Կարապետյանի




Ձևավորումը և էջադրումը՝ Արմեն Գևորգյանի

Սրբագրումը՝ Հասմիկ Հովհաննիսյանի

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում

Երևան 2012

ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻՆ ՆԿԻՐԿԱԹ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ





ՊԱՏԿԵՐԱՔԱՆՆԱԿՆԵՐ ԻՆ ՋՈՒՂՍԻ ՈՇՆՁԱՅՎԱԾ ԳԵՐԵՋԱՆՈՒՄԻ ԽԱՉՔԱՐԵՐԻՑ

